

**5.7. Ստանդարտացում, սերտիֆիկացում և հավատարմագրում**

Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ամփոփ տեղեկատվության, 2008թ. հունվար-սեպտեմբերին ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման և նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների պահպանման պետական վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով.

**Ստանդարտացում:** Ընդունվել և պետական գրանցում է ստացել ազգային 172 ստանդարտ: ՀՀ տարածքում գործադրվել են 91 միջպետական, 62 միջազգային և 19 ՀՀ ստանդարտներ: Պետական գրանցում է ստացել արտադրանքի վերաբերյալ ՀՀ տեխնիկական 376 պայման: Թողարկվել է 8 անուն տեղեկատվական նյութ:

**Սերտիֆիկացում:** Տրվել է համապատասխանության 9638 սերտիֆիկատ, որից 8628-ը՝ ներմուծվող, 46-ը՝ արտահանվող արտադրանքի համար, մնացած 964-ը տրվել է ՀՀ-ում արտադրվող սերիական արտադրանքի համար: Մերժվել է արտադրանքի սերտիֆիկացման 11 հայտ, բոլորն էլ արտադրանքի անհամապատասխանության պատճառով:

**Հավատարմագրում:** ՀՀ տարածքում հավատարմագրվել է սերտիֆիկացման 1 մարմին և 5 լաբորատորիա:

**Ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման գործունեության համեմատական ցուցանիշները, 2008թ. հունվար-սեպտեմբերին**

(հավելածր /նվազումը «-» նշանով/)

	Ընդամենը, միավոր	Հունվար-սեպտեմբերի համեմատ, %		
		2005թ.	2006թ.	2007թ.
Ընդունված և պետական գրանցում ստացած ազգային ստանդարտների քանակը	172	- 44.7	91.1	13.2
Պետական գրանցում ստացած տեխնիկական պայմանների քանակը	376	82.5	9.3	4.4
Թողարկված տեղեկատվական նյութերի քանակը	8	60.0	- 33.3	- 33.3
Տրված համապատասխանության սերտիֆիկատների քանակը	9638	42.8	28.9	25.4
որից՝				
ներմուծվող արտադրանքի համար	8628	60.9	38.4	18.0
արտահանվող արտադրանքի համար	46	- 84.8	- 23.3	- 46.5
Արտադրանքի սերտիֆիկացման մերժված հայտերի քանակը	11	- 45.0	- 31.3	- 8.3
ՀՀ տարածքում հավատարմագրված լաբորատորիաների քանակը	5	- 37.5	- 66.7	- 54.5

**Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանք:** 2008թ. հունվար-սեպտեմբերին անորակության պատճառով չեն սերտիֆիկացվել ներմուծված և ՀՀ-ում արտադրված արտադրանքի որոշ տեսակներ:

**Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանքի բաշխվածությունն ըստ երկրների, 2008թ. հունվար-սեպտեմբեր**

Երկիրը	Արտադրանքի անվանումը	Քանակը
Հայաստանի Հանրապետություն	խավիար սպիտակուցային հատիկավոր նմանակած	56.5 կգ
	մրգային օղի	սերիական արտադրություն
	ընպելիք սառը սուրճ	սերիական արտադրություն
	մազութ M-100	419128 կգ
	հնդկաձավար բոված	46000 կգ
	օղի «Юрий Долгорукий»	...
Իսպանիա	բանող հակասառիչ	324 կգ
Գերմանիա	ուայթ-սպիրիթ	33.2 կգ
Իրանի Իսլամական Հանրապետություն	կերոսին տեխնիկական	28270 կգ
Չինաստան, Եվրամիություն	խաղալիքներ	787 կգ